

Սաուդյան Արաբիայի փոխակերպումը. Տեսլական 2030

Մղեկյան Վահրամ Վ.

ԵՊՀ, Արևելագիտության ֆակուլտետ, Արաբագիտության ամբիոն,

1-ին կուրսի մագիստրատուրայի ուսանող (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0009-8272-5067>

vahram.mghdesyan@edu.y-su.am

ՀՏԳ: 21/29, 28 (532); EDN: GELMEC;

DOI: 10.58587/18292437-2024.5-29

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Սաուդյան Արաբիա, սոցիալական բարեփոխում, Մուհամմադ բին Սալման, Տեսլական 2030

Трансформация Саудовской Аравии. Видение 2030

Мгдесян Ваграм В.

Факультет востоковедения ЕГУ, кафедра арабистики

Студент 1 курса магистратуры (Ереван, РА)

Аннотация. В работе представлены положения, направления и проекты проекта Саудовской Аравии «Видение 2030», а также шаги, направленные на трансформацию общества и социальные реформы.

В работе рассматриваются коренные причины возникновения, инициации и развития проекта до 2016 года и далее. Также упоминаются основные направления, стратегии и цели программы, а также социальные реформы, реализованные после 2016 года, когда на сцену вышел принц Саудовской Аравии Мухаммед бин Салман. Работа также включает изучение механизмов, посредством которых должен быть реализован мегапроект «Видение 2030», а также вызовов и препятствий, стоящих на пути последнего.

Ключевые слова и словосочетания: Саудовская Аравия, социальная реформа, Мухаммед бин Салман, Видение 2030

The Transformation of Saudi Arabia. Vision 2030

Mghdesyan Vahram V.

YSU, Faculty of Oriental Studies, Department of Arabic Studies,

1st year master student (Yerevan, RA)

Abstract. The paper presents the provisions, directions and projects of the Saudi Arabian project "Vision 2030", as well as the steps aimed at the transformation of society and social reforms. The paper examines the root causes of the emergence, initiation and development of the project up to 2016 and beyond. It also mentions the main directions, strategies and goals of the program, as well as the social reforms implemented after 2016, when the Saudi Arabian prince Mohammed bin Salman entered the scene. The paper also includes an examination of the mechanisms by which the mega-project "Vision 2030" should be implemented, as well as the challenges and obstacles standing in the way of the latter.

Keywords & phrases: Saudi Arabia, social reform, Muhammed bin Salman, Vision 2030

Հանդիսանալով առանցքային կամրջող գերտերություն Սաուդյան Արաբիան Միջին Արևելքի ինքնիշխան ամենամեծ պետությունն է 2,150,000 կմ² տարածքով և միակն է, որն ունի ափամերձ շրջաններ և՛ Կարմիր ծովում, և՛ Պարսից ծոցում: Այս ամենը թույլ է տալիս Սաուդյան Արաբիային կապող օդակ հանդիսանալ Եվրոպայի և Ասիայի միջև, իսկ «Տեսլական 2030» ծրագրի ներդրմամբ այն կարող է հանդիսանալ «Մետաքսի ճանապարհ»-ի անկյունաքարային դերակատարներից մեկը:

Հաշվի առնելով այն, որ Սաուդյան Արաբիան մեծապես կախում ունի նավթից եկող եկամուտներից սաուդական վերնախավը հանձն առավ նախաձեռնել մի ծրագիր, որը հիմնովին կփոխեր պատկերացումները Թագավորության մասին, և թույլ կտար ստեղծել տնտեսական և

սոցիալական զարգացման ամուր հենարաններ՝ բացվելով ամբողջ աշխարհի առջև:

«Տեսլական 2030» նախագիծը ամբողջությամբ փոխում է պատկերացումները Սաուդյան Արաբիայի մասին, քանզի այն քայլերը, որոնք իրագործվել և շարունակում են իրագործվել ծրագրի շրջանակներում շատ դժվար էր պատկերացնել դեռ վաղ 1990-ականներին կամ 2000-ականների սկզբին:

Հիմնվելով պետության գլխավոր հենասյունների զարգացման վրա Սաուդյան Արաբիան ձգտում է իր մեջ ներառել տարածաշրջանի գլխավոր առևտրատնտեսական տարանցիկ ուղիները և այդ կերպ ձեռք բերել նաև քաղաքական լուրջ դերակատարում, համագործակցության ուղիներ հարթելով Ասիական և Եվրոպական երկրների միջև:

Տեսլական 2030 դրույթները և նպատակը

Մինչ անդրադառնալը Սառուղյան Արաբիայի հավակնոտ ծրագրին հարկ են համարում հպանցիկ անդրադառնալ այն երկրներին, որոնք դեռ 1970-ականներից սկսել էին մոդեռնիզացման գործընթացը: Ծոցի երկրները հայտնի են չվերամշակված նավթի և բնական գազի խոշոր արտադրությամբ և արտահանմանը: Այնուամենայնիվ, հայտնի է, որ նրանք զգալի ջանքեր են գործադրում 1970-ականների կեսերից, որպեսզի նվազեցնեն պետության կախվածությունը նավթի արդյունահանումից և վերածվեն խոշոր արտահանող արդյունաբերական տերությունների: Ծոցի արաբական երկրները բնականաբար հասկանում էին, որ իրենց կարևոր խաղաթուղջը դա էժան էներգիան է և դրանով է պայմանավորված իրենց հավակնոտ դերը աշխարհում: Միևնույն ժամանակ Սառուղյան Արաբիան իրեն դիտարկում է որպես իսլամական աշխարհի կենտրոն, ինչպես նաև համաաշխարհային էներգետիկ շուկայի կենտրոն և տարանցիկ ճանապարհ Ասիայի և Եվրոպայի միջև: Այս ամենի համատեքստում առաջ է գալիս «Տեսլական 2030» (այսուհետ՝ տեսլական) ծրագրի գաղափարը:

Խոսելով այս ծրագրի մասին, որը ծնունդ է առել Սառուղյան Արաբիայում 2016 թվականին Մուհամմադ բին Սալման Ալ-Սաուդի (թագաժառանգ, պաշտպանության նախարար, ինչպես նաև տնտեսական և զարգացման հարցերով խորհրդի նախագահ) կառավարման ժամանակ, պետք է ասել որ այն իր ուրույն տեղն է զբաղեցնում բազում հետազոտողների աշխատություններում: Փորձ է կատարվում մասնագիտական շրջանակներում տալ այս ծրագրի նպատակի համապարփակ սահմանումը, սակայն կարծում են, որ դա այդքան էլ իրատեսական չէ, քանի որ «Տեսլական 2030»-ը բազմաշերտ ծրագիր է՝ միտված ոչ միայն նվազեցնելու Սառուղյան Արաբիայի տնտեսության կախվածությունը նավթից՝ զարկ տալով վերջինիս այլ ճյուղերի զարգացմանն այլև՝ տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական դիվերսիֆիկացմանը: Հարկ է նշել, որ այս ծրագրի առանցքային ռազմավարական նպատակակետերից է նաև կենսունակ հասարակության ձևավորումը և վերջինիս մաս կազմող երիտասարդ տղամարդկանց և կանանց ներգրավումը աշխատաշուկայում:

«Տեսլական 2030» մեզանախագիծը նաև շատ կարևոր դեր ունի տարածաշրջանային համատեքստում: Այն պատասխան է ոչ միայն ներքին խնդիրներին, այլև՝ արտաքին: Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ տարածաշրջանում տնտեսական, տեղեկատվական և մի շարք այլ որոշումներով հավակնոտ կարգավիճակ ունի Արաբական Միացյալ Էմիրությունները, և Սառուղյան Արաբիայի այս ծրագիրը միտված է

վերոնշյալ ոլորտների զարգացմանը և տարածաշրջանում իր դերի մեծացմանը:

Ալ-Արաբիային տված իր հարցազրույցում «Տեսլական 2030»-ին վերագրվող դրույթների և նպատակների շարքում արքայազն Մուհամմադ Բին Սալմանը նշել է, որ

1. «Տեսլական 2030»-ի շրջանակներում առաջ քաշված նպատակները միտված են բարելավել հասարակությունը կամ ումման, և այդ բարեփոխումները չեն հակադրվում իսլամական արժեքներին:

2. Դառնալով «գլոբալ ներդրումային գոտի» այն կնպաստի տնտեսության ծաղկմանը, որը կախյալ չէ նավթից, իսկ այս ամենին հասնելու հիմնական միջոցներն դրանք՝ 1) բարեփոխումների և կրթական համակարգի զարգացման խթանումն է, ինչպես նաև 2) մանր և միջին ձեռնարկատիրությունների գործունեության խթանումը, 3) համահավասար հնարավորությունների ապահովումը բոլոր սառուղացիների համար, և 4) կանանց դերի բարձրացումը տնտեսության ոլորտում:

3. Թագավորության կենտրոնական դերը «Մետաքսի ճանապարհ» նախագծում, և նրա դերը, որպես կապող կամուրջ Եվրոպայի և հեռավոր Արևելքի միջև [5]:

Այս ամենի վերաբերյալ 2015 թվականին «McKinsey and Company» միջազգային խորհրդատվական ընկերությունը հրապարակել է մի հոդված, որտեղ խոսել է Սառուղյան Արաբիայի տնտեսական մեծ ներուժի մասին, ինչպես նաև այն քայլերի մասին, որոնք պետք է իրագործվեն Թագավորության կողմից տնտեսական բարգավաճման համար: Վերոնշյալ հոդվածում ասվում է նաև այն մասին, որ Սառուղյան Արաբիային անհրաժեշտ է շուրջ 4 տրլն. ներդրում կատարել մի շարք ոլորտներում, որը կարող է հանգեցնել 6 միլիոն նոր աշխատատեղերի առաջացմանը արդեն 2030 թվականին [6]:

Ծրագրի իրագործման նախագծերը և հիմնական ուղղությունները

«Տեսլական 2030» մեզանախագծի հիմնական ուղղությունների և նախագծերի մասին պատկերացում կազմելու համար պետք է հասկանալ, որ այն իր մեջ ներառում է 4 ենթանախագիծ: Դրանք են՝ Neom-ը, Qiddiya-ը, Red Sea Project-ը, և ROSHN-ը: Այս ծրագրերից յուրաքանչյուրը միտված են տնտեսական բարգավաճմանը, օտարերկրյա ներդրումների խթանմանը և տարբեր ոլորտներում հասարակության սոցիալական զարգացմանը: Վերջինս իրենից ենթադրում է աշխատանքի հնարավորություն տեղացիների համար:

«Տեսլականը» կազմված է 3 հիմքերից, 6 հիմնական նպատակներից, ինչպես նաև ընդգրկում է 96 ռազմավարական նպատակ և իրականացման 13 ծրագիր [7]:

Այդ 3 հիմքերից են հետևյալը՝

- Կենսունակ հասարակություն
- Բարգավաճող տնտեսություն
- Հավակնոտ ազգ

Առաջինը կենսական նշանակություն ունի «Տեսլական 2030» նախագծի իրագործման համար և հանդիսանում է ամուր հիմք կայուն տնտեսության համար: Կարևոր է այն փաստը, որ այս հասարակության անդամները ապրում են իսլամական արժեքներին համապատասխան և հպարտ են իրենց ազգային ինքնությանը և ազգային ժառանգությանը:

Բարգավաճող տնտեսությունը լայն հնարավորություն է ընձեռում ստեղծելու կուռ կրթական համակարգ շուկայական պահանջներին համապատասխան, ինչպես նաև ստեղծում է տնտեսական բարենպաստ հարթակ մանր ու միջին ձեռնարկատերերի համար: Այս ամենի արդյունք կարող է ծառայել մի շարք պետական կառույցների մասնավորեցումը, և գրավիչ ներդրումային հարթակի ստեղծումն օտարերկյա կապիտալի համար:

Հիմքերից վերջինը ենթադրում է կարողունակ, էֆեկտիվ կառավարության գործադրում: «Մենք ունենք բազում չօգտագործված հնարավորություններ և բնական հարուստ պաշարներ, սակայն մեր իրական հարստությունը մեր ժողովրդն ու հասարակությունն է: Մենք հպարտ ենք այն ամենով ինչը մեր ազգը եզակի է դարձնում, այն արարական և իսլամական աշխարհի կենտրոնն է» - Մուհամմադ Բին Սալման [24]:

Մեզանախագծի 6 հիմնական նպատակներն են՝

- ազգային ինքնության և իսլամական արժեքների ամրապնդում;
- ապահովել լիարժեք և առողջ կյանք;
- տնտեսության ան և նրա դիվերսիֆիկացում;
- գործազրկության նվազեցում;
- սոցիալական պատասխանատվության հնարավորության ընձեռում:

Անկախ վերը նշված նպատակներից գոյություն ունեն մի քանի կարևոր կետեր, որոնք հարկ են համարում նշել՝

1. Ուխտագնացության եկողների թվի բարձրացում; ներկայիս 8 միլիոնից մինչև 30 միլիոն:

2. Արաբական ժառանգության ճանաչումը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից:

3. Ունենալ նվազագույնը 3 քաղաք, որոնք ընդգրկված կլինեն 100 լավագույն քաղաքների ցանկում:

4. Թագավորության ներսում մշակութային և ժամանցային գործունեության վրա տնտեսության ծախսերը ավելացնել ներկայիս 2,9%-ից մինչև 6% :

5. Մարմնամարզության կարևորության բարձրացումը ներկայից 14%-ից մինչև 40%:

6. Միջին կյանքի տևողության երկարացում 74-ից 80-ի:

7. Հասցնել փոքր և միջին ձեռնարկությունների տոկոսային հարաբերակցությունը ընդհանուր ՀՆԱ-ում 20%-ից մինչև 35%:

8. Կանանց դերի բարձրացում աշխատաշուկայում ներկայից 22%-ից մինչև 30%:

9. Գործազրկության նվազեցում 11,6%-ից մինչև 7%-ի [24]:

Այս և այլ կարևոր նպատակներ ընկած են ապագայի նախագծի հիմքում:

Տեսլական 2030 ծրագրի առաջացման արտաքին և ներքին գործոնները

Խոսելով Սաուդյան Արաբիայի կողմից ձեռնարկված «Տեսլական 2030» ծրագրի մասին, պետք է հասկանալ թե որոնք էին այն արտաքին և ներքին գործոնները, որոնք հանգեցրին այս մեզանախագծի առաջացմանը:

Արտաքին գործոնների շարքից հարկ են համարում նշել այն, որ Թագավորությունը տարածաշրջանում համարվում է խոշոր նավթարդյունահանող (իր վերահսկողության տակ ունենալով աշխարհում երկրորդ ամենամեծ նավթային պաշարները և 6-րդ ամենամեծ գազային պաշարները), և նավթային շուկայում գնային տատանումները, որի կվիստեսենցիան հանդիսացավ 2014 թվականին նավթի գների կտրուկ նվազումը, լուրջ խնդիրների առաջ կանգնեցրեց Սաուդյան Արաբիային, որի տնտեսության գրեթե 90%-ը հիմնված է նավթային եկամուտների վրա:

Հաջորդ արտաքին գործոնը, որն ըստ իս հանդիսացավ ծրագրի առաջացման նախադրյալ, դա Սաուդյան Արաբիայի աշխարհագրական դիրքն է: Այն Միջին Արևելքի ինքնիշխան ամենամեծ պետությունն է 2,150,000 կմ² տարածքով: Այն միակ պետությունն է, որն ունի ափամերձ շրջաններ և՛ Կարմիր ծովում, և՛ Պարսից ծոցում: Այս ամենը թույլ է տալիս Սաուդյան Արաբիային կապող օդակ հանդիսանալ Եվրոպայի և Ասիայի միջև, իսկ այս ծրագրի ներդրմամբ այն կարող է հանդիսանալ «Մետաքսի ճանապարհ»-ի անկյունաքարային դերակատարներից մեկը:

Այս գործընթացում կարևոր դեր ունեցավ նաև 2011 թվականին թափ առած «Արաբական գարուն»¹ շարժումը, որը իր հերթին Սաուդյան Արաբիայում առաջացրեց սոցիալական և տնտեսական բարեփոխումների պահանջ:

Արտաքին դրդապատճառներից պետք է նաև հաշվի առնել անվտանգության խնդիրը: «ASDA'A BCW» հասարակության՝ մասնավորա-

¹ Ցույցերի և հանրահավաքների հեղափոխական ալիք Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում:

պես երիտասարդների շրջանում, խնդիրների խորքային վերլուծությամբ զբաղվող և տվյալագիտության ոլորտում մասնագիտացած այս ընկերությունը, որը հիմնադրվել է 1999 թվականին, 2016 թվականին Ծոցի արաբական երկրների շրջանում կատարել էր հարցում, որի արդյունքում մասնակիցների մոտ 65%-ը գտնում էին, որ Մաուդյան Արաբիայում նախևառաջ պետք է լուծվի անվտանգային խնդիրները, ինչպես նաև մարդու իրավունքների, մասնավորապես կանանց իրավունքներին վերաբերող հարցերը, և կարելի է ենթադրել որ «Տեսլական 2030» նախագիծն իր մեջ ներառում է այս խնդիրներին ուղղված լուծումները [23]:

Անվտանգության և կայունության պահպանման ավելի ակնառու միջոցը, դա՛ իշխող կառույցի կողմից ազգային արժեքների վրա մեծ շեշտադրումն է և այն, ինչ սաուդյի ակադեմիկոս Մադավի Ալ Ռաշիդը անվանում է «հիպերնացիոնալիզմ» [29]: Պետության կողմից հովանավորվող ազգայնական դիսկուրսը, ինչպես, օրինակ, վերջերս հաստատված «Ազգային օրվա» ավելի ու ավելի մշակված տոնակատարությունները, դարձել են առավել ակնառու, և 2016 թվականի «Ազգային օրվա» տոնակատարությունները ընդգծեցին «Տեսլական 2030-ի» կարևորությունը պետության ապագա զարգացման համար: Ազգային օրվա տոնակատարությունը պաշտոնական տոն է հայտարարվել 2005 թվականին, այն տարում, երբ թագավոր Աբդուլազիզը գահ բարձրացավ՝ ցանկանալով ամրապնդել ազգային ինքնությունը:

Արտաքին գործոնների շարքին կարող ենք դասել նաև Չինաստանի հետ հարաբերությունների մերձեցումը, քանզի Թագավորության համար վերջինս հանդիսանում է լուրջ արդյունաբերական ներուժ ունեցող տնտեսական գործընկեր, որի ներդրումային ծրագրերը խոշոր կապիտալի աղբյուր կարող են հանդիսանալ:

Անշուշտ ակներև է, որ «Տեսլական 2030» ծրագիրը բազմաշերտ է և վերջինիս առաջացման արտաքին գործոնները բազում են, հաճախ հետազոտողի համար ոչ լիարժեք տեսանկյունի, սակայն պետք է հաշվի առնել, որ այս ծրագիրը իր մեջ է ներառում կյանքի բոլոր ոլորտները և այդ իսկ պատճառով այն ունի նաև, ոչ պակաս կարևոր, առաջացման ներքին գործոններ:

Ներքին գործոնների թվում ցանկանում են նշել նավթի գնային կտրուկ անկումը: 2014 թվականին, երբ մեկ բարել նավթի արժեքը 115 դոլարից կտրուկ նվազեց 28 դոլարի Թագավորության պետական բյուջեն կանգնեց դեֆիցիտի առջև, որը հասավ տոկոսի 2015 թվականին իսկ արդեն 2016 թվականի դրությամբ հասավ 13.1 տոկոսի [27]:

Երկրորդ գործոնը դա բնակչության թիվն է, որի աստիճանաբար աճի արդյունքում Մաու-

դյան Արաբիայի նավթից ստացված եկամուտները սկսում էին չբավարարել բնակչության պահանջները: Հարկ է նշել, որ վերջինիս բնակչությունը դեռ 1950-ականներին հասնում էր մոտավորապես 3,120,000 իսկ արդեն 2023 թվականի մարդահամարի արդյունքում այն կազմում է 34.2 միլիոն, որից 34%-ը օտարերկրացիներ են [45]: Եվ այս ցուցանիշի գլխավոր բաղադրիչն այն է, որ մոտավորապես 60 տոկոսը չի անցնում 30 տարեկանը, այսինքն երիտասարդությունը շատ է, սակայն աշխատատեղերը շուկայում սահմանապակ և ոչ բոլորն են կարողանում իրենց տեղը գտնել աշխատաշուկայում [13]:

Գործոնների թվին պետք է դասել նաև այն, որ Թագավորության հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտները, կորցրել էին իրենց ֆունկցիոնալությունը և այլևս անհրաժեշտ էր դրանց դիվերսիֆիկացումը: Ժամանակի ընթացքում նորարարական տեխնոլոգիաների առաջացումը և ինֆորմացիոն հոսքերի լայն հասանելիությունը հասարակությանը թույլ էր տալիս տեսնել աշխարհն իրենց շուրջ և հասկանալ, որ նրանք սկսում են հետընթաց ապրել այս թվային տեխնոլոգիաների և զարգացման համատեքստում:

Վերափոխման կարիք ուներ նաև որոշում կայացնելու մեխանիզմը: Աբդուլազիզի մահից հետո որոշումները ցանկացած հարցի վերաբերյալ կատարվում էին, կարելի է ասել, կոլեգիալ սկզբունքով, որը շատ ժամանակ էր պահանջում համընդհանուր որոշման հասնելու համար և այդպիսով գործընթացը դանդաղում էր: Որոշում կայացնելու այսպիսի մեխանիզմը բնականաբար ժամանակի ընթացքում չէր արթարացնում ժամանակակից կյանքի պահանջները [42]:

Ներքին խնդիրների շարքին կարող ենք դասել նաև կադրային քաղաքականության վարման անկարողությունը: Մի շարք անկյունաքարային կառույցների ղեկավարումը ստանձնում էին այնպիսի անհատներ, ովքեր բացի այն որ չէին կարողանում կատարել իրենց առաջ դրված խնդիրները, այլև կասկածվում էին մի շարք կոռուպցիոն գործարքներին մասնակից լինելու մեջ: Հետագայում այս ամենի արդյունք հանդիսացավ այն, որ ներկայիս Թագաժառանգ Մուհամմադ Բին Սալմանի կողմից 2019 թվականին տեղի ունեցան զանգվածային ձեռքբերություններ, և այդ անձանց թվում էին նաև արքայազներ, բարձրաստիճան ընտանիքի ներկայացուցիչներ, մոտավոր հաշվարկներով գրեթե 100 հոգի [10]:

Կարևոր է հաշվի առնել այն փաստը, որ մարդկային ռեսուրսները շատ կարևոր են տվյալ երկրի զարգացման համար, սակայն Թագավորության տարբեր ոլորտներում աշխատուժի մեծ մասը գրավում են օտարերկրացիները:

Բնականաբար շեշտը դրված է մրցակցային հասարակության ստեղծման վրա, և դա պահանջում է բարենպաստ պայմանների ստեղծում այդ հասարակության անդամ կազմող քաղաքացիների ներգրավման համար:

Տեսլական 2030. Հասարակության վերփոխմանն ուղղված քայլերը

«Տեսլական 2030» նախագծի առաջացման թե արտաքին, և թե ներքին գործոնները արդեն իսկ առկա էին: Գաղափարական հենքը նախապատրաստելուց հետո պետք էր իրականացնել գործուն քայլեր, որոնք միտված կլինեին հատկապես հասարակության վերափոխմանը և հասարակական կյանքին առնչվող բոլոր ոլորտների մոդեռնիզացմանը: Այս ամենի իրագործման համար Սաուդական կառավարությունը ստեղծել է մի շարք պետական ենթակառուցվածքներ, որոնց գործառույթը կայանում է «Տեսլական 2030» նախագծի նպատակների իրագործման համար գործուն մեխանիզմների ստեղծմամբ և վերջինիս պատշաճ և հետևողական իրագործմամբ: Նոր ստեղծված կառույցների թվում էին Տնտեսական Խորհուրդը և Չարգացման Խորհուրդը (Council of Economic and Development Affairs- CEDA), որը միտված է մշակելու ապագա մարտավարությունները: Նպանատիպ կառույցների շարքին է դասվում Արդյունքների կառավարման Ազգային կենտրոնը (National Centre for Performance Management - Adaa), որի բուն գործառույթը կայանում էր ընթացիկ նախագծերի արդյունավետության վիճակագրության հաշվարկմամբ, որից հետո այդ տվյալները տրամադրվում են կառավարությանը [37]:

Նախագիծը պետք է իրականացվի հատուկ մշակված ծրագրերով (Vision Realization Programmes - VRP), և այս ծրագրերը տասերեքն են՝

1. Ֆինանսական հատվածի զարգացման ծրագիր
2. Հակաբյուջետային հաշվեկշռի ծրագիր
3. Հաջի և Ումրահի ծրագիր
4. Բնակարանաշինության ծրագիր
5. Մարդկային կապիտալի զարգացման ծրագիր
6. Ազգային ինքնության արժեվորման ծրագիր
7. Ազգային ընկերությունների խթանման ծրագիր
8. Արդյունաբերության զարգացման և լոգիստիկայի ազգային ծրագիր
9. Վերափոխման ազգային ծրագիր
10. Սեփականաշնորհման ծրագիր
11. Պետական ներդրումային ծրագիր
12. Կյանքի բարելավման ծրագիր
13. Ռազմավարական գործընկերության ծրագիր [11]:

Այս ծրագրերից յուրաքանչյուրը վերահսկվում է տարբեր հսկիչ խորհուրդների կողմից, որոնք նշանակվում են CEDA-ի հաստատմամբ: Վերջինս աշխատում է անմիջապես Մուհամմադ բին Սալմանի հետ համագործակցության միջոցով և իհարկե համապատասխան անձանց նշանակումները, որոնք պետք է հետևեն տվյալ ծրագրի պատշճ իրագործմանը, կատարվում են Թագաժառանգի կողմից:

Ակնհայտ է, որ այս ծրագրերը անդրադառնում են Սաուդյան Արաբիայի կյանքի բոլոր ոլորտներին, մասնավորապես հասարակության կյանքին, նրանց կյանքի ապրուստի պայմաններին, կրթական և աշխատանքային պայմաններին, մշակութային և ժամանցային գործունեությանը:

Բնականաբար այս ամենի իրագործման համար անհրաժեշտ էր ֆինանսական մեծ ներուժ, հաշվի առնելով այն փաստը, որ 2014 թվականին նավթի գների կտրուկ անկումը, լուրջ խնդիրների առաջ կանգնեցրեց Թագավորությանը: Վերջինս 2016 թվականին հայտարարեց ծախսերի կրճատման մասին: Նվազեցնելով նախարարների աշխատավարձերը և Շուրայի Խորհրդի անդամներին տրված արտոնությունները, կրճատելով բոլոր պետական ծառայողների հավելավճարներն ու վճարովի արձակուրդները [44]:

Այս ամենի արդյունքում Սաուդական կառավարությունը շուրջ 5.3 միլիարդի ներդրում կատարեց բանկեր, որոնք պետք է ուղղվեին մասնավոր սեկտորների աջակցմանը:

2017 թվականի ավարտին նավթի գները որոշակիորեն կայունացան, թույլ տալով գրանցել կառավարության եկամտի աճ: Այս ամենին հաջորդեցին եկամտի ավելացման այլ միջոցների ներդրումներ, դրանցից են ԱՀԱ-ն, կամ հարկերը, որոնք զանձվում էին գազավորված, էներգետիկ ըմպելիքների և ծխախոտի ներկրումներից:

Կառավարությունը նաև սկսեց նվազեցնել էլեկտրականության և գազի սուբսիդիաները, սակայ Աշխատանքի և Սոցիալական զարգացման նախարարությունը հրապարակեց մի ծրագրի, որի միջոցով 2017 թվականից խոցելի կարգավիճակում գտնվողներին տրվում էր ամսական 100 դոլարին համարժեք դինար: Եվ արդեն 2019 թվականի դրությամբ շուրջ 3.75 միլիոն շահառուներ օգտվել էին այս ծրագրից [19]:

Հաջորդ իրականացմանն միտված ծրագիրը դա Էլեկտրոնային հավելվածի ստեղծումն էր, որը ներդրվեց Adaa-ի կողմից, ինչը թույլ էր տալիս հասկանալ քաղաքացիների կարծիքը այս կամ այն պետական բարեփոխման շուրջ և թե ինչքանով է այն գործում: Իհարկե այս ծրագրի շրջանակներում նաև քաղաքացիներին հնարավորություն էր ընձեռնվում էլեկտրոնային տարբերակով կատարել բազում գրանցումներ տար-

բեր ոլորտներում, ներառյալ վիզների գրանցումը [34]:

Հաջորդը դա Ֆինանսների Նախարարության կողմից 2018 թվականին ներդրված Etimad ծրագիրն էր, որը քաղաքացիներին թույլ է տալիս էլեկտրոնային հարթակում կատարել յուրաքանչյուր իրավաբանական փաստաթղթավորում: Բժշկական տեսանկյունից այն թույլ է տալիս անցնել անվճար բժշկական խորհրդատվություն:

Անշուշտ աշխատանքային շուկան ևս կաթվածային վիճակում էր, քանզի թե տղամարդկանց, և թե կանանց շրջանում համապատասխան աշխատանք գտնելը շատ դժվար էր: Նույնիսկ այդ աշխատանքը գտնելը դեռ չէր ապահովագրում տվյալ անձնավորությանը, որ վերջինս կաշխատի այդտեղ: Այս ամենին լուծում տալու նպատակով Աշխատանքի և սոցիալական զարգացման նախարարությունը (Ministry for Labor and Social Development- MLSD), հանձն առավ մի նախագիծ, որով պետությունը սկսում էր հովանավորել տվյալ աշխատանքի համար հարկավոր փորցաշրջանի անցկացումը, ինչպես նաև ավելացնում էր վերապատրաստումների քանակը նոր աշխատողների համար: Այս ամենի շրջանակներում մեծապես ուշադրություն էր դարձվում կանանց՝ ապահովելով նրանց աշխատանքային իրավունքները և պատշաճ աշխատանքային պայմանները:

Հասարակության վերափոխման քայլերի շարքին է դասվում նաև կրթական բարեփոխումները: Աշխատանքի և սոցիալական զարգացման նախարարությունը, Կրթության նախարարության հետ միասին ձեռնամուխ են լինում այնպիսի համալսարանների ստեղծմանը, որոնք կդասվեն աշխարհի 10 լավագույն համալսարանների շարքին:

Հաջորդ քայլը դա «սաուդիզացումն» էր, որի հիմնական նպատակն էր աշխատաշուկան հնարավորինս լցնել սաուդցիներով: Այս ամենի համար ներդրվեց (Nitaqat) ծրագիրը, որի շրջանակներում տարբեր ընկերությունները պարտավորվում էին իրենց մասնագիտական թիրախավորումներն այնպես կատարել, որպեսզի այդ աշխատանքի համար գտնվի սաուդցի աշխատող [12]: Այս ծրագրի առաջացման պատճառն այն էր, որ Սաուդյան Արաբիայի աշխատաշուկայի մոտ 60 տոկոսը օտարերկրացիներ էին: Այս ծրագրի հաջող իրականացման համար Սաուդական կառավարությունը 2017 թվականին ներդրեց հարկման մեխանիզմ յուրաքանչյուր աշխատողի համար ով սաուդցի չէր [42]: Հետևաբար ինչքան շատ օտարերկրացի աշխատող էր ունենում տվյալ ընկերությունը, ապա այդքան հարկ էր վճարում յուրաքանչյուրի համար:

Սաուդական ղեկավարությունը հասկանում էր, որ օգտագործելով իր բնակչության միայն կեսը չի կարող հասնել տնտեսական լուրջ հաջողությունների, և այդ իսկ պատճառով նրանք սկսեցին ներդնել բազում ծրագրեր, որպեսզի կանանց դերակատարությունը աշխատանքային շուկայում հետզհետե ավելանա: Բնականաբար դեռ 2011 թվականից սկսած կանանց տրվեցին աշխատանքային որոշ արտոնություններ, սակայն «Տեսլական 2030» ծրագրի առաջացումը նրանց տվեց ավելի լայն հնարավորություններ տարբեր ոլորտներում:

Տնտեսական հաջողություններ գրանցելու և պետությունը զարգացնելու համար անհրաժեշտ է ներդրումներ, որոնք բնականաբար բարդ էին իրականացվում քանզի Սաուդյան Արաբիայի բիզնեսային քաղաքականությունը զարգացած չէր և այդպիսով շատ ու շատ ընկերություններ չէին ցանկանում հիմնել բիզնեսներ քանզի մի շարք գործարքներ դառնում էին գրեթե անհնար տարբեր արգելքների պատճառով: Այս խնդրին լուծում տալու համար Սաուդական կառավարությունը 2017 թվականին կատարեց մի շարք բարեփոխումներ, որոնք վերաբուրում էին անհատ ձեռներեցներին, տարբեր ընկերություններին, որոնց տրվում էր արտոնություններ, որի շրջանակում հնարավոր էր ստեղծել գրավիչ պայմաններ արտաքին ներդրումների համար: Փոփոխվեց նաև դատական համակարգը, 2016-2017 թվականների ընթացքում ստեղծվեցին Արբիտրաժային և Առևտրային դատարաններ [27]:

Հասարակության վերափոխման քայլերի շարքում կարող է դասվել նաև Kafalah ծրագիրը, որի հիմնական նպատակն է փոքր ու միջին բիզնեսների ֆինանսավորումն ու զարգացումը, որի կապիտալը կազմում է շուրջ 1 միլիարդ: Այսօր այս ծրագիրը աշխատում է շուրջ 500 ստառտափների հետ: Արդարության համար պետք է նշել, որ վերոնշյալ ծրագիրը գործում էր մինչ «Տեսլական 2030» ծրագիրը, սակայն վերջինս նրան նոր թափ հաղորդեց [46]:

Ամենակարևոր քայլերից մեկը դա խտրականության դեմ ուղղված քայլերն էին: Ծրագրի մեկնարկից հետո սկսվեցին լայնամասշտաբ բարեփոխումները կանանց դերի բարձրացման համար: Մի շարք արգելքներ, որոնք տարիների պատմություն ունեին՝ հանվեցին: Կանանց թույլատրվեց վարել մեքենա, մեկնել արտերկիր առանց տղամարդու ուղղորդման, նաև նրանք հնարավորություն ստացան բացել բանկային հաշիվներ, ներկայացնել ամուսնության կամ ամուսնալուծության հայտեր, մինչդեռ այս ամենի իրավունքը վերապահված էր միայն տղամարդկանց:

Մեծ կարևորություն ստացավ նաև բնակարանների հարցը, քանզի երիտասարդները, որոնք կազմում են Թագավորության բնակ-

չության մեծամասնությունը շատ հաճախ բախվում էին այս խնդրին քանի որ չկաին բավարար ֆինանսական միջոցներ: Հարկ է նշել որ Ծոցի արաբական երկրներում բնակարանային սուբսիդիաները արդեն իսկ մեկնարկել էին, իսկ Թագավորության համար դա դեռ առկաիված խնդիր էր: Այս խնդրին լուծում տալու համար 2019 թվականին «Սաուդյան Արաբիայի Ազգային բնակարանային ընկերությունը» և «Չինաստանում պետական շինարարական ճարտարագիտական ընկերությունը» միասին ձեռնարկեցին մի ծրագիր, որի շրջանակներում պետք է կառուցվի շուրջ 5595 բնակարանային շինություն Ռիյադում: Այս ծրագրի կապիտալը կազմում էր մոտավորապես 670 հազար ամերիկյան դոլար [40]:

Մեծ թափ առավ նաև ժամանցային ոլորտը, և այս բարեփոխումների շրջանակներում ստեղծվեց «General Entertainment Authority» ծրագիրը որը խթան հանդիսացավ թատրոնների բացմանը, բացօդյա միջոցառումների կազմակերպմանը: Արդեն 2019 թվականի Մարտ ամսի դրությամբ այս ծրագիրը կազմակերպել էր շուրջ 6 հազար միջոցառում շուրջ 27 միլիոն մասնակցի համար: 2018 թվականին կինոթատրոնում տեղի ունեցան առաջին ֆիլմերի ցուցադրությունները, որը բնականաբար հատկանշական իրադարձություն էր տարիներ տևած արգելքից հետո: Այս ծրագիրը նախատեսում է 64 միլիարդ դոլարի ներդրում կատարել ժամանցային ոլորտում հետագա 10 տարիների ընթացքում [31]: Հարկ է նշել, որ այս ծրագրի շրջանակներում ստեղծվել են մոտ 2 հարյուր հազար աշխատատեղեր: Այս բարեփոխումների շարքում են նաև կանանց ֆուտբոլային հավաքականի հիմնումն և կանանց օլիմպիական հավաքականի ստեղծումը:

Մեծ դերակատարում ունի նաև «Պետական ներդրումային հիմնադրամը», որը ձեռնարկել է մի շարք գործողություններ դեպի Թագավորություն ֆինանսական խոշոր հոսքեր ապահովելու համար: Պետական հիմնադրամը կնքել է մի շարք պայմանագրեր խոշոր ընկերությունների հետ:

1. Posco - Կորեական պողպատի արտադրությամբ զբաղվող ընկերություն, որում Թագավորությունը գնել է 38 տոկոս բաժնեմաս;

2. Uber Investment Initiative - Ամերիկյան ընկերություն, որում Թագավորությունն ունի 5 տոկոս բաժնեմաս, որը կազմում է 3,5 միլիարդ դոլար;

3. AMC - Ամերիկյան ընկերություն ում հետ 2018 թվականին Սաուդյան Արաբիան կնքել է պայմանագիր, որով պետք է բացվի շուրջ 50-100 կինոթատրոն;

4. AccorInvest - Ֆրանսիական հյուրանոցային ընկերություն, որում Սաուդական կառա-

վարությունը ունի 57,6 տոկոս բաժնեմաս, որը կազմում է 5,33 միլիարդ դոլար

5. Oyo - Հնդկական ամենամեծ հյուրանոցային ընկերությունը, ում հետ 2019 թվականին Սաուդյան Արաբիան կնքեց պայմանագիր [13]:

Այս և այլ պայմանագրերը ապահովում են մեծ ներդրումներ, որոնք էլ խթանում են տնտեսական աճին:

Տնտեսական և ֆինանսական տեսանկյունից հաջորդ կարևորագույն քայլը դա վիճակային համակարգի ներդրումն էր, որը թույլ էր տալիս 49 երկրի քաղաքացիների մուտքը Սաուդյան Արաբիա: Այս ծրագրի մեկնարկից 10 օր անց Թագավորությունը հյուրընկալել էր մոտավորապես 24 հազար օտարերկրացի [34]: Հարկ է նշել, որ Թագավորություն այցելող կին օտարերկրացիների վրա չկար որևէ պարտադրանք հազուստի տեսանկյունից, ինչն իհարկե խթան է հանդիսանում այցելուների համար:

Իրավական բարեփոխումների ալիքը հանգեցրեց նաև մարդու իրավունքների պահպանման ամրապնդմանը: Այս համատեքստում կարևոր դեր ունեցավ ցմահ ազատագրկման օրենքի վերացումը, որը ըստ նոր տեսլականի մարդու իրավունքների ոտնահարում է:

Տեսլական 2030-ի համատեքստում հասարակության վերափոխմանը միտված ծրագրերի լիարժեք իրականացման մարտահրավերները

Բազմիցս նշվեց, որ «Տեսլական 2030»-ը իրենից ներկայացնում է լայնամասշտաբ և բազմատեսակ բարեփոխումների ծրագիր, որոնք Արքայազն Մուհամմադ բին Սալմանը 2016 թվականից սկսեց ակտիվորեն իրականացնել, և գրանցել շոշափելի արդյունքներ: Բնականաբար երբ տեղի են ունենում բարեփոխումներ՝ դա արդեն իսկ իրենից ենթադրում է, որ պետք է տեղի ունենան մի շարք արգելքների փոփոխություն կամ վերանայում, ինչու չէ նաև չեղարկում: Այս ամենի ճանապարհին Սաուդյան Արաբիան և մասնավորապես՝ Մուհամմադ բին Սալմանը կանգնեց մի լուրջ խնդրի առջև: Այդ խնդիրը կապված էր կրոնի և հոգևոր առաջնորդների հետ: Քաջ հայտնի է, որ Սաուդյան Արաբիայի ստեղծման օրվանից կրոնական ուղղվածությունը՝ վահհաբիականությունն է և որ այն խորը արմատներ ունի և տարիների պատմություն, սկսած 18-րդ դարի երկրորդ կեսից, սակայն այսօր նորընտիր թագաժառանգը փորձում է համադրել բարեփոխումների իր ծրագրերը կրոնական որոշումների և օրենքների հետ:

Այդ իսկ պատճառով Մուհամմադ բին Սալմանը սկսեց հեռացնել և ձեռքարկել մի շարք հոգևոր առաջնորդների, և սկսեց նշանակել իր համախոհներին՝ իր ծրագրերի համար անհրաժեշտ կրոնական աջակցություն ստանալու նպատակով [54]:

Անկախ այն բարեփոխումների, որոնք իրականացվում են Սաուդյան Արաբիայում դեռ խնդրահարույց է մարդու իրավունքները և ազատ արտահայտվելու իրավունքը: 2016 թվականից սկսած, երբ Մուհամմադ բին Սալմանը ստանձնեց թագաժառանգի իր դերը, սկսվեցին մասայական ձեռքարկություններ: Մարդկանց ձեռքարկում էին իրենց քննդատական ելույթների կամ սոցիալական հարթակներում պետությանը քննադատող գրառումների համար, և դատապարտում ազատագրկման:

Նմանօրինակ գործողությունները տեղի էին ունենում նաև երիտասարդների հետ, երբ Թվիթթերի իր էջում՝ քննադատական գրառումներից հետո, 2022 թվականի օգոստոսի 9-ին, ձերբակալեցին Սալմա Ալ-Շեբահ անունով մի ուսանողի, որը դատարանի կողմից դատապարտվեց 34 տարի ազատազրկման՝ մեղադրվելով կիբեր հանցագործության մեջ: Բնականաբար մարդու խոսքի իրավունքի ոտնահարումը կամ կարծիքի արտահայտման սահմանափակումը լուրջ խոչընդոտ կարող է հանդիսանալ «Տեսլականի» իրագործման ճանապարհին [55]:

Խոսելով այն մասին, որ Սաուդյան Արաբիայի կողմից նախաձեռնված ծրագիրը մեծ դեր է հասկացնում կանանց և խթանում է նրանց ներգրավվածությանը հասարակության յուրաքանչյուր ոլորտում, միևնույն է չենք կարող չանդրադառնալ այն փաստին, որ այսօր էլ կանանց իրավունքները և ազատ խոսքի իրավունքը մնում են սահմանափակված: Այս ամենի վառ օրինակ է կանանց իրավունքների պաշտպան Նասիմա ալ-Սադահի և Սամար Բադաուի ձերբակալությունը 2018 թվականին, ովքեր մինչ այժմ էլ մնում են ձերբակալված իրենց ակտիվ հակաիշխանական ելույթների համար:²

2018 թվականի ցույցերի արդյունքում ձերբակալվեցին ոչ միայն տղամադիկ, այլ նաև իգական սեռի ներկայացուցիչներ, վերջիններիս թվում էր Լուջան ալ-Հաթուլին, ով ձերբակալվեց և բանտում մնաց շուրջ 1001 օր: Նույն իրադարձության ժամանակ ձերբակալվել էր նաև Նուֆ Աբդ ալ-Ազիզ անունով մի աղջիկ, ով հայտնել էր իր աջակցությունը այդ շարժմանը:³ Այսպիսով ակներև է, որ կանանց իրավունքների ոտնահարումը լրջագույն մարտահրավեր է «Տեսլական 2030» նախագծին ընդառաջ:

Խոսքի ազատությունից բացի, սահմանափակված են նաև լրատվության ազատությունը, սոցիալական հարթակների ազատությունը, որի վառ օրինակ է 2018 թվականի, հոկտեմբերի 2-ին Washington Post լրատվականի լրագրող Ջամալ Խաշոգջիի սպանությունը Թուրքիայում՝

Սաուդյան Արաբիայի դեսպանության շենքում: Այս իրադարձությունը լուրջ խնդիրներ ստեղծեց բարեփոխումներ իրականացնող և բարի համբավ ձեռք բերած Թագաժառանգի համար:

Մարտահրավերների շարքին կարող ենք դասել նաև այն խնդիրները, որոնց հետ արքայազն Սալմանը բախվում է իր մեզանախագծերն իրականացնելիս: Ինչպես բազմիցս նշվել է Սաուդյան Արաբիան նախաձեռնել է կառուցել տեխնոլոգիապես հարուստ և ժամանակակից «ՆեՒՄ» քաղաքը, որն ունի 170 կլիմատեր երկարություն և 200 մետր լայնություն: Այն զբաղեցնում է մոտավորապես 26,500 ք.կմ տարածք և այն բնակեցված է Հուաիտատ⁴ ցեղի բնակիչներով, որոնց թիվը տատանվում է 20-40 հազարի միջև: 170 կլիմատեր երկարությամբ քաղաքը ձգվում է Թաբուկ⁵ նահանգից մինչև Կարմիր ծովի ավազանը, և հենց այս հատվածում է, որ Թագավորությունը կանգնել էր լուրջ խնդրի առջև: Թաբուկ շրջանում բանկվող ցեղին սաուդական իշխանությունները 2017 թվականին տեղեկացրին ծրագրի մեկնարկի մասին, սակայն վերջիններս հրաժարվում էին լքել իրենց բնակավայրերը, քանզի համարում էին, որ իրենք այդտեղ հաստատվել էին դեռ Օսմանյան կառավարման ժամանակներից առաջ: 2020 թվականի Մարտ ամսին սաուդական կառավարությունը այնտեղ ուղարկեց հասուկ ուժեր, որոնք սկսեցին մարդկանց տեղահանումը: Այդ գործողությունների արդյունքում բազում մարդիկ ձերբակալվեցին, ովքեր դիմադրություն էին ցույց տալիս, իսկ մի քանիսը նույնիսկ սպանվեցին: Սպանվածներից մեկն էր Աբդ ալ-Ռահման ալ-Հուաիտին, ով հրաժարվում էր լքել իր բնակարանը, որի արդյունքում դաժանաբար սպանվեց:⁶

Այս իրադարձությունները կարող են վրիպել հասարակ դիտողի աչքից, սակայն պետք է արձանագրել, որ բարեփոխումները իրականացվում են շատ հաճախ բռնի ուժի և մարդկանց իրավունքների խախտման միջոցով: Հիշատակության է արժանի այն փաստը, որ Ալ-Հուաիտատ ցեղի որոշ շեյխեր՝ ստանալով կառավարության կողմից գումարներ դատապարտեցին ընդվզման դուրս եկած բնակիչներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՈՒՆ

Աշխատանքի շրջանակներում առաջադրված նպատակի՝ Սաուդյան Արաբիայի «Տեսլական 2030» ծրագրի սոցիալական բաղադրիչի և հասարակության տրանսֆորմացիային միտված քայլերի ուսումնասիրության արդյունքում

² Human Rights Watch, "Saudi Arabia: Proposed Reforms Neglect Basic Rights"

³ Human Rights Watch, "Saudi Women's Rights Defenders Released, but Not Free"

⁴ Ալ-Հուաիտատ՝ արաբական ցեղ, որը հաստատված է Հորդանանում, Սաուդյան Արաբիայի, Պաղեստինի և Սինայ թերակղզու հյուսիսում, ինչպես նաև Բահրեյնում:

⁵ Թաբուկ՝ քաղաք Սաուդյան Արաբիայի հյուսիսարևելքում, ունի միջազգային օդանավակայան:

⁶ ALQST, "The Dark Side Of Neom, Expropriation, expulsion and prosecution of the region's inhabitants," February 2023

Օգտագործված գրականության ցանկ

դուրս բերվեցին մի շարք ուշագրավ եզրահանգումներ՝ ներկայացված ստորև.

❖ «Տեսլական 2030» նախագծի սոցիալական բարեփոխմանը միտված ծրագրերը և մարտավարությունները զգալիորեն նպաստել են սոցիալական պատկերի փոփոխմանը, վերջինիս վառ օրինակ կարող է լինել գործազրկության ցուցանիշի նվազումը (11%-ից մինչև 7%):

❖ Նախագծի շրջանակներում մեծ դեր է հատկացվում քաղաքացուն և յուրաքանչյուր ծրագիր փորձում է հնարավոր հարթակներ ստեղծել վերջինիս զարգացման համար:

❖ Այսօր մենք տեսնում ենք, որ ծրագրի իրագործման արդյունքում Մաուդյան Արաբիան փորձում է կապող օղակ հանդիսանալ կամ կամրջել Ասիայի և Եվրոպայի առևտրատնտեսական շահերը: Այսօր էլ Մ.Արևելքի գլխավոր առևտրային զարկերակի՝ Բար Էլ-Մանդեբի միջանցքի, խափանման արդյունքում հենց Թագավորությունն է, որ իր վրա է կենտրոնացրել առևտրային այդ տարանցիկ ուղիները:

❖ Մաուդյան Արաբիան իր ձեռնարկված նախագծի միջոցով փորձում է դառնալ ներդրումային շահավետ գոտի օտար կապիտալի համար և այդ ամենի վկայությունն այն է, որ սաուդական «ԱՐԱՄԿ» ընկերությունը մեկնարկում է իր մասներաժիմների վաճառքի գործընթացը՝ ապահովելով եկամտի մեծ ներհոսք: Թագավորությունը նաև ձգտում է օգտագործել իր ամբողջ տարածքային ներուժը, որի մեծ մասը անապատային տարածքներ են: Ծրագրի մեկնարկով սկիզբ դրվեց այնպիսի մեզանախագծերի իրագործմանը, որոնք լիովին օգտվում են սաուդական տարածքային ներուժից և զարկ են տալիս մարդկային կապիտալի զարգացմանը:

❖ Վերոհիշյալ նախագիծը բարձրացնում է Մաուդյան Արաբիայի դերը, որպես տարածաշրջանային դերակատարում ունեցող երկիր, մասնավորապես՝ մրցակցությունը Արաբական Միացյալ Էմիրությունների հետ ակնհայտ է, քանզի սաուդական իշխանությունները խոշոր ներդրումներ են կատարում թե՛ արհեստական բանականության, և թե՛ վերականգնվող էներգիայի ոլորտներում: Խոսքերիս վառ ապացույց կարող է հանդիսանալ այն, որ վերջերս Մաուդյան Արաբիան ներկայացրեց իր առաջին արհեստական բանականությամբ գործող կնոջը, որը ներկայացնում է սաուդական ազգային արժեքները և պատմությունը:

❖ Մարդու իրավունքների ոտնահարումը, հոգևորականների ձերբակալումը և մի շարք վայրերում բռնի տեղահանումները շարունակում են խոչընդոտ հանդիսանալ մեզանախագծի համար:

1. الهيئة العامة للإحصاء
2. المملكة العربية السعودية " رؤية 2030, قصة التحول 2016-2021 "
3. المملكة العربية السعودية " رؤية 2023, الإنجازات "
4. المملكة العربية السعودية " رؤية 2023, برنامج تنمية القدرات البشرية "
5. مقابلة ولي العهد السعودي الأمير محمد بن سلمان حول رؤية 2030
<https://youtu.be/Y1HfRhFHWUc?si=5pCP38gvg7SEjpbZ>
6. غسلا الكبسي، لولا ويتزل، توم إيشروود، جواد خلا، جلا ميشكي وحسن نورا، ` يجب على المملكة العربية السعودية أن تترك إمكانات اقتصادها غير النفط من خلال التحول الذي تقوده الإنتاجية ` ماكينزي أند كومباني، 1 ديسمبر 2019
<https://www.mckinsey.com/featured-insights/employment-and-growth/moving-saudi-arabias-economy-beyond-oil>
7. جامعة الامام عبدالرحمن بن فيصل. " رؤية 2030: المحاور والبرامج والأهداف والغايات الاستراتيجية "
<file:///C:/Users/user/Desktop/Vision%202030/vission2030sheetenglish.pdf>
8. السعوديين. الرؤية السعودية 2030
9. "التقديرات السكانية 2018"، الهيئة العامة للإحصاء (المملكة العربية السعودية)، تم الدخول في 5 مارس 2024
<https://www.stats.gov.sa/en/43>
10. زاك بوشامب، "التطهير في السعودية"، فوكس، 6 نوفمبر 2017،
<https://www.vox.com/world/2017/11/6/16613088/saudi-arabia-princes-arrested-mohammed-bin-salman>
11. "رؤية المملكة العربية السعودية 2030 الأهداف الإستراتيجية و برامج تحقيق الرؤية"
12. تدفع الشركات السعودية 59% أقل لنفس الوظيفة في القطاع العام
<https://www.saudigazette.com.sa/article/569742/SAUDI-ARABIA/Saudi-companies-pay-59-less-for-same-job-in-public-sector>
13. "صندوق الاستثمارات العامة (2018-2020)", رؤية السعودية 2030, (2017)
https://vision2030.gov.sa/sites/default/files/attachments/PIF%20Program_EN_0.pdf
14. السعوديين. الإصلاحات الاجتماعية للملك سلمان عبد العزيز آل سعود
15. البوابة السعودية. ما هي أهم مشاريع و أهداف رؤية 2030 السعودية؟
16. المدينة. قبائل الحويطات: نبؤم وآمالا مشاريع خير لمنطقتنا ولا يقف أمامها إلا "مفلس" و "حاسد"
17. مصطفى الزواتي. "نسكن هنا قبل الدولة"... جذور علاقة "الحويطات" بمعقلها التاريخي المهذّب بالاخفاء لصالح "نيؤم"
18. Mohammed S. Al Surf, Lobna A. Mostafa "Will the Saudi's 2030 Vision Raise the Public Awareness of Sustainable Practices?", Effat University, Jeddah 21478, Saudi Arabia, pg. 1-14
19. Asharq al-Awsat, February 22, 2019, <https://aawsat.com/english/home/article/1603381/373-mnbenefit-saudi-citizen-account-program-february> (accessed 25.04.2024)
20. Khalid A. Fakeeh "KSA 2030 Vision (Kingdom of Saudi Arabias's 2030 Project) and its focuse on Families and Students", King Abdullaziz University, Volume 149- No.1, September 2016
21. Khashan H. "Saudi Arabia's Flawed (Vision 2030)", MIDDLE EAST QUARTERLY, Winter 2017
22. Courtney F. "What will Saudi Arabia's Vision 2030 mean for its citizens?", London School of Economics and Political Science, May 3, 2016
23. Kingdom of Saudi Arabia "VISION 2030. ACHIEVEMENTS 2016-2020"
24. Saudi Arabia, " FINDINGS FROM 8TH ANNUAL ASDA'A BURSON-MARSELLER ARAB YOUTH SURVEY RELEASED, "ASDA'A BCW Arab Youth Survey Media Centre, April 12,2016,

- <https://arabyouthsurvey.com/en/arab-youth-see-saudi-arabia-as-their-countrys-biggest-ally-for-fifth-consecutive-year/>
25. Kingdom of Saudi Arabia, "vision-2030-overview," 85, <https://www.vision2030.gov.sa/media/cofh1nmf/vision-2030-overview.pdf>
 26. Saudi Arabia "Vision 2030. A Story of Transformation 2016-2021"
 27. Doing Business 2020: Economy Profile, Saudi Arabia, World Bank Group, <https://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/country/s/saudi-arabia/SAU.pdf>.
 28. **Abdel Abdel G.** "A New Kingdom of Saud?", *BROOKINGS*, February 14, 2018
 29. **Stephen G., Katherine W.** "Assessing Saudi Vision 2030: A 2020 Review", *Rafik Hariri Center for The Middle East*, June, 2020 <https://www.atlanticcouncil.org/wp-content/uploads/2020/06/Assessing-Saudi-Vision-2030-A-2020-review.pdf>
 30. **Sabine P.** "Between religion, oil dependence and reforms", *Qantara.de*, 27.09.2019
 31. "Saudi Arabia Eyes Billions of Dollars in Entertainment Investments," *Reuters*, January 22, 2019, <https://www.reuters.com/article/us-saudi-entertainment/saudi-arabia-eyes-billions-of-dollars-in-entertainment-investments-idUSKCN1PG2NY>.
 32. **Abdel Abdel G.** "Vision 2030 & the Political Costs of Saudi Reforms", *INTER PRESS SERVICE*, February 19, 2024
 33. **Jack M.** "Saudi Arabia from Within: Diversionary Policy of Iranian Containment?", July 5, 2018
 34. **Tamara Abueish**, "Saudi Arabia allows citizens from 49 countries to apply for e-visa: Full list," *Al Arabiya*, August 4, 2021, <https://english.alarabiya.net/coronavirus/2021/08/03/Saudi-Arabia-allows-citizens-from-49-countries-to-apply-for-e-visa-Full-list>
 35. **Asmaa E.** "Examining the Relationship between Economic Reform and Political Freedom: Vision 2030 and Democratic Transition in Saudi Arabia", *ROWAQ ARABI*, 15.07.2023
 36. **Nader H.** "Implementing Saudi Arabia's Vision 2030: An Interim Balance Sheet", *Brandeis University*, No.17, 2019
 37. **Noor Nugali**, "Smartphone Application Launched to Improve Public Agencies' Services in Saudi Arabia," *Arab News*, February 15, 2019, <https://www.arabnews.com/node/1452376/saudi-arabia>
 38. **Kechichian J.** "Saudi Arabia and Its New Leadership in 2030", *King Faisal Center for Research and Islamic Studies*, 2019.09.19
 39. **Shmuel E., Yoel G.** "Saudi Arabia's Vision 2030: Reducing the Dependency on Oil", *INSS Insight*, No. 819, May 6, 2016
 40. **Ikran E.** "New Women for New Saudi Arabia? Gendered Analysis of Saudi Vision 2030 and Women's reform policies", *Dankook University*, Vol.35, No.3 pp. 115-133, September 2019
 41. **Jane K.** "Vision 2030 and Saudi Arabia's Social Contract Austerity and Transformation", *Chatham House*, July 2017
 42. **Jack Ball**, "Saudi, China's CSCEC Ink \$660 Million Riyadh Housing Deal," *Arabian Business*, February 24, 2019, <https://www.arabianbusiness.com/construction/413907-saudi-chinas-cscec-ink-6667m-riyadh-housing-deal>
 43. **Gregory Warner**, "Episode 821: The Other Davos," *NPR*, January 31, 2018, <https://www.npr.org/sections/money/2018/01/31/582233478/episode-821-the-other-davos>. *The National Center for Performance Management* ("Aadaa"), has a web presence, though the dashboard is not publicly available; "Performance Measurement Operations," accessed February 24, 2020, <https://www.aadaa.gov.sa/en/Performance%20Measurement%20Operations>.
 44. **Makio Y.** "Vision 2030 and the Birth of Saudi Solar Energy", *Middle East Institute*, 2016
 45. **Jean-François S.** "THE END OF SAUDI ARABIA'S ADDICTION TO OIL", *Ras Al Khair*, Saudi Arabia, November 29, 2016.
 46. **P. K. Abdul Ghafour**, "Nitaqat: 200,000 Firms Closed Down," *Arab News*, August 05, 2014, <https://www.arabnews.com/news/featured/611896>.
 47. **Dr Mamdouh G. S.** "Saudi Arabia's Vision 2030: A Reality or Mirage", *ESCP Europe University*, London
 48. **Reem Abdellatif.** "What you need to know: A timeline of Saudi Arabia's Vision 2030 reforms", 28.10.2019
 49. "Regulatory Sandboxes and Financial Inclusion," *Consultative Group to Assist the Poor*, October 2017, <https://www.cgap.org/sites/default/files/Working-Paper-RegulatorySandboxes-Oct-2017.pdf>; <https://www.entrepreneur.com/article/338516>.
 50. **Banska B.** "SECURITY FORUM 2020", *Matej Bel University in Banská Bystrica*, 2020
 51. **Steffen Hertog**, "Segmented Clientism: The Political Economy of Saudi Economic Reform Efforts," *Saudi Arabia in the Balance: Political Economy, Society, Foreign Affairs*, eds. Paul Aarts and Gerd Nonneman (New York: NYU Press, 2006).
 52. **Paul and Browning**, "Saudi Arabia Slashes Ministers' Pay," *Reuters*, September 26, 2016; **John Kemp**, "Saudi Arabia Eases Austerity Just as Oil Prices Decline," *Reuters*, June 21, 2017, <https://www.reuters.com/article/us-saudi-reform-kemp/saudi-arabia-eases-austerity-just-as-oil-prices-decline-kempidUSKBN19D03W>. In early 2017, the government reinstated all wage and benefit allowances that had been removed.
 53. <https://population.un.org/wup/Country-Profiles/>, accessed March 5, 2024
 54. "Mohammed bin Salman's Fake Anti-extremist Campaign," *Foreign Policy*, June 13, 2019, <https://foreignpolicy.com/2019/06/13/mohammed-bin-salmansfake-anti-extremist-campaign/>
 55. **Amnesty International**, <https://www.amnesty.org/en/location/middle-east-and-north-africa/saudi-arabia/report-saudi-arabia/>, (accessed) 04.04.2024

Сдана/Հանձնվել է՝ 20.08.2024
 Рецензирована/Գրախոսվել է՝ 27.08.2024
 Принята/Ընդունվել է՝ 03.09.2024